

1455ին, դարձեալ զինքը կը տեսնենք «ի յերկիր Քաջբերունի, ի քաղաքիս Արճէշ կոչեցեալ, ի դուռն Սուրբ տաճարին Գէորգեայ» Աւետարանի մը գրչութեամբ ըզրազուած: Հաւանաբար հոն էր գեռ, երբ կը գրէր 1456ի Աւետարանը, Վարդան Հայրապետին համար: Կ'երևի թէ զիրքը կազմուած էր՝ երբ համարաբար գրել հարկ կ'ըլլայ, էջերուն ստորին լուսանցքներուն վրայ: Յով. Մանգասարենց այդ շատ զժուարին գործը կատարած ատեն՝ կը գրէր ստացողին համար. «Տէր Վարդան սուրբ հայր, անհար է ի կապած զիրք համարաբար գրել, բայց սէր սրբութեան քո ետ գրել գայս, զի իմ մահու աւուրն կանգնին» (Յիշ. Ը.): այսինքն, քիչ սիրելու համար է որ կը գրեմ, որուն համար իմ մահուան օրս՝ բարի վրկայ կ'ըլլաս ինծի: 1456ին գրած է մասամբ իմ Մաշտոցս՝ Տէր Ազարիային:

1457ին կը գրէ ձաչոց մը, Մխիթար կրօնաւորի համար, որուն ուսուցիչ կը յիշէ «զվարդեա Վարդանն» որ անտարակոյս զրակապն է: Ուրեմն, Մխիթար կազմող մըն էր, որուն մասին առ այժմ աւելի բան մը չեմ գիտեր: Գրչութիւնը կը կատարէ «յերկիրս Քաջբերունի, ի քաղաքիս Արճէշ կոչեցեալ, ի դուռն սուրբ տաճարիս Գէորգեայ զաւրավարիս» (Յիշ. Թ.): Նոյն ատեն մասամբ գրած կ'երևի Յայմաւուրք մըն ալ:

1461ին, կը յիշուի ձաչոց մը, որ Ուրմիոյ Չարպազ գիւղը կը գտնուէր: «Ստացող՝ աթոռակալ սուրբ Բարդուղիմէոսի Հայրապետ եպիսկոպոս, որդի Ստեփանոս քահանայի ու Չուրլ-Սաթունի, զրիչ՝ Յովհաննէս քահանայ, զրակազմ՝ Վարդան, յերկիր Քաջբերունի, ի յԱրճէշ քաղաքի, ընդ հովանեալ սուրբ տաճարին Գէորգեայ զօրավարին, ի հայրապետութեան Չաքարիայի, ի փաթշահութեան Ջհանշահի»<sup>2</sup>: Դժբախտաբար յիշատակարանը չի արուիւր, սակայն պէտք է Յովհաննէս Մանգասարենցի գրութիւնը նկատել հաւանաբար:

1462ին, կը գրէ Աւետարան մը՝ Սօջայ Սաշատուրի եւ անոր կնոջ Սօլթան Սա-

թունի համար միշտ «յերկիրս Քաջբերունի, ի քաղաքիս՝ Արճէշ կոչեցեալ, ընդ հովանեալ սուրբ տաճարիս Գէորգայ զաւրավարիս» (Յիշ. ԺԲ.): Չարմանակի է, սակայն, որ Յով. Մանգասարենց ցարդ բոլոր յիշատակարաններուն մէջ լսի կը յիշէ «յաշխարհակալութեան մեծ դանին՝ Ջհանշահ փաթշահին, որ մեծաւ քաջութեամբ տիրեաց աշխարհին Իրազա»: Արդեօք իր իշխանութեան տարածմամբ եւ զօրացմամբ աւելի տանելի՞ եղաւ: Ամէն պարագայի տակ, այս երկար յիշատակարանին մէջ, Յով. Մանգասարենց չի գտնուած իր աւեր-աւարութեանց մասին:

1463ին, դարձեալ ան կը գրէ ուրիշ Աւետարան մը, որ դարձեալ Ջհանշահ անոնց գէշ անուանումներու կը յիշուի իրր «փաթշահ»: Կ'աւելցնէ «եւ է իշխան երկրիս՝ նորին որդին Հասան Ալին» (Յիշ. ԺԳ.):

1465ին կը գրէ Աւետարան մը եւս, միշտ անդ, Սալիմ խաթուն տիկնոջ համար, որուն ամուսնոյն ու տղոց պատահածները, մի առ մի յիշուած յիշատակարանին մէջ (Յիշ. ԺԴ), կրնան սղերդութեան մը նիւթ կազմել: Այս 1465ին, Յով. Մանգասարենցի կինը կը մեռնի, որուն մասին ան կը յիշատակարդէ. «կենակցին իմոյ Շուքրանին, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս»:

1468ին, կը գրէ Աւետարան մը եւս, անդ, ամիւր Սարգիսի եւ կնոջ Հայխաթունի համար: Այդ ատենները երկրին տէրութիւնը կը փոխուի եւ Ուզուն-Հասան կը տիրակալէ: Ան ինքզինքը Թագաւոր Հայոց կը կոչէր (Շահր Արման):

Յաջորդ 1469 տարին կը գրէր Շարակչոց մը, անդ, Չաքէոս կրօնաւորի համար (Յիշ. ԺԶ.):

Դարձեալ անդ, 1470ին, Շարական մը, բարունի Մկրտիչ Արգելանցիի համար: Յով. Մանգասարենց կը գրէ «եւ պակասութեան զրիս անմեղապիւր լերուք, զի

2. Լ. Ս. Սալիկեանի Յիշատակարաններու շարք (1451-1480) թիւ 200, կամ էջ 160: Արտատրուած Հ. Ալիշանի «Հայկարան»էն: